# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**N** ***24***      ***2 սեպտեմբերի 2011թ.***

### ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 2011թ. համայնքային բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածներում կատարված հետևյալ փոփոխությունները.

1. Պակասեցնել՝

ա/ համայնքային բյուջեի 0161.51 <<Ընդհանուր բնույթի ծառայություններ>> /այլ դասերին չպատկանող/ ծրագրի 4235 <<Կառավարչական ծառայություններ>> հոդվածը 300,0 հազ. դրամ, սահմանել վերոհիշյալ հոդվածի ծախսային պլանը 500,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 1500,0 հազ. դրամ;

բ/ համայնքային բյուջեի 0111.51 <<Կառավարման ապարատի պահպանում>> ծրագրի 4222 <<Արտասահմանյան գործուղումներ>> հոդվածը 600,0 հազ. դրամ: Սահմանել վերջինիս ծախսային պլանը 400,0 հազ. դրամ;

գ/ համայնքային բյուջեի 0831.51 <<Հեռուստահաղորդումներ>> ծրագրի 4234 <<Տեղեկատվական ծառայություններ>> հոդվածը 250,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը, ինչպես նաև ծրագրի ծախսային պլանը 350,0 հազ. դրամ,

դ/ համայնքային բյուջեի 1071.55 <<Հասարակական կազմակերպություններին աջակցություն>> ծրագրի 4819 <<Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> հոդվածը 1000,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս հոդվածի և ծրագրի ծախսային պլանը 5200,0 հազ. դրամ:

2. Ավելացնել՝

ա/ համայնքային բյուջեի 0922 <<Հանրակրթական ուսուցում>> ծրագրի 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածը 300,0 հազ. դրամ:

բ/ համայնքային բյուջեի 0661.51. <<Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ>> /այլ դասերին չպատկանող/ ծրագրի

- 4264 <<Տրանսպորտային նյութեր>> հոդվածը 1000,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 5700,0 հազ. դրամ;

Նույն ծրագրի 4252 <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածը 300,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 1749,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը սահմանել 58371,5 հազ. դրամ:
գ/ համայնքային բյուջեի 0823.51 <<Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ>> ծրագրի 4639 <<Դրամաշնորհներ համայնքի ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածը 250,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 13066,0 հազ. դրամ;
դ/ ավելացնել 0111.51 <<Կառավարման ապարատի պահպանում>> ծրագրի 4214 <<Կապի ծառայություններ>> հոդվածը 250,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 2030,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 45692,0 հազ. դրամ: Ավելացնել նույն ծրագրի 4239 <<Ընդհանուր բնույթի ծառայություններ>> հոդվածը 50,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 300,0 հազ. դրամ:

3. Կապված անասնաբուժական ծառայության ֆինանսավորման նոր փոփոխության հետ, ավելացնել 2011թ. համայնքային բյուջեի եկամտային մասը 60,0 հազ. դրամ, ավելացնելով համայնքային բյուջեի պետության կողմից համայնքներին տրվող պատվիրակված ծառայություններ բաժնի, անասնաբուժական ծառայության եկամուտների պլանը՝ 60,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս պլանը 360,0 հազ. դրամ, իսկ պատվիրակված ծառայությունների ընդհանուր պլանը սահմանել 9353,7 հազ. դրամ, որից՝

- ՄՏՏԲ ծառայությունը - 6468,5 հազ. դրամ
- ՔԿԱԳ ծառայությունը - 2525,2 հազ. դրամ
- Անասնաբուժական ծառայությունը – 360,0 հազ. դրամ

Ընդամենը՝ 9353,7 հազ. դրամ

Սահմանել բյուջեի եկամուտների պլանը 369621,7 հազ. դրամ: Ավելացնել նաև բյուջեի 0421.51. <<Գյուղատնտեսություն>> ծրագրի 4241 <<Մասնագիտական ծառայություններ>> հոդվածը 60,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 360,0 հազ. դրամ, իսկ համայնքի բյուջեի ծախսային պլանը 369 621,7 հազ. դրամ:

4. Քաղաքապետին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույց:

*Ավագանու անդամներ՝*

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Արթուր Ալեքսանյան | [signature] | կողմ |
| 2. | Արազի Գևորգյան | [signature] | կողմ |
| 3. | Հենրիկ Գևորգյան | [signature] | կողմ |
| 4. | Յուրիկ Գևորգյան | [signature] | կողմ |
| 5. | Կարեն Երմազյան | [signature] | — |
| 6. | Արտակ Զիրոյան | [signature] | — |
| 7. | Կարեն Իսկանդարյան | [signature] | կողմ |
| 8. | Վարդան Կարապետյան | [signature] | կողմ |
| 9. | Մուշեղ Հակոբյան | [signature] | — |
| 10. | Տիգրան Հարությունյան | [signature] | կողմ |

11. Խաչիկ Մնացականյան

12. Ռոբերտ Նավասարդյան

13. Իլյիչ Շաղյան

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

N *25* *2 սեպտեմբերի 2011թ.*

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԻ 16 ՇԵՆՔԻ 8 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉՈՒՀԻ ՆԻՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 26.12.2002թ. <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքը /գլուխ IV <<Գույքահարկի գծով արտոնություններ>> հոդված 15 կետ 3/.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Զիջել Ն. Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի 6786 դրամ գույքահարկի պարտքը:

***Ավագանու անդամներ՝***

1. Արթուր Ալեքսանյան
2. Արագի Գևորգյան
3. Հենրիկ Գևորգյան
4. Յուրիկ Գևորգյան
5. Կարեն Երմազյան
6. Արտակ Զիրոյան
7. Կարեն Իսկանդարյան
8. Վարդան Կարապետյան
9. Մուշեղ Հակոբյան
10. Տիգրան Հարությունյան

11. Խաչիկ Մնացականյան ______________ ______________

12. Ռոբերտ Նավասարդյան ______________ ______________

13. Իլիչ Շաղյան ______________ ______________

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N *27* *2 սեպտեմբերի 2011թ.*

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔՈԹԵՋՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎԱԾ ԹԱՂԱՄԱՍԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրային օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքին՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղափոխման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քոթեջներով կառուցապատված թաղամասը բաղկացած է հինգ զուգահեռ ձգվող փողոցներից, որոնց երկայնական ուղղությամբ երկու կողմով կառուցված են քոթեջներ.

### ՈՐՈՇՈւՄ Է՝

1.Արարատ քաղաքի անշարժ գույքի հասցեավորումը կանոնակարգելու նպատակով կառուցապատված քոթեջների թաղամասի հինգ փողոցները, հարավ արևելյան կողմից սկսած, անվանակոչել՝ ք. Արարատ, Քոթեջներ 1-ին փողոց, Քոթեջներ 2-րդ փողոց, Քոթեջներ 3-րդ փողոց, Քոթեջներ 4-րդ փողոց, Քոթեջներ 5-րդ փողոց:

2.Քոթեջների թաղամասի փողոցների երկայնքով տեղակայված անշարժ գույքի համարակալումը և հասցեավորումը կատարել ըստ ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ յուրաքանչյուր փողոցի երկայնքով կառուցված քոթեջները համարակալել աճման կարգով, սկսած փողոցի հյուսիսային ծայրից՝ ձախակողմյանը կենտ թվերով, աջակողմյանը՝ զույգ:

***Ավագանու անդամներ՝***

1. Արթուր Ալեքսանյան
2. Արագի Գևորգյան

| | | | |
|---|---|---|---|
| 3. | Հենրիկ | Գևորգյան | կողմ |
| 4. | Յուրիկ | Գևորգյան | կողմ |
| 5. | Կարեն | Երմազյան | — |
| 6. | Արտակ | Ջիրոյան | — |
| 7. | Կարեն | Իսկանդարյան | կողմ |
| 8. | Վարդան | Կարապետյան | կողմ |
| 9. | Մուշեղ | Հակոբյան | — |
| 10. | Տիգրան | Հարությունյան | կողմ |
| 11. | Խաչիկ | Մնացականյան | կողմ |
| 12. | Ռոբերտ | Նավասարդյան | կողմ |
| 13. | Իլյիչ | Շաղյան | կողմ |

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ